



ԲԱԳՅԱՎԱԼԴ

Է. ՏԱՐԻ. Թիկ 10.

1850

ՄԱՅԻՍԻ 15.

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

ԱՃԽԱՐՀԱԴԻՏԱԿ

Գ.

Քարենան և բարեխարոյ¹:

ԱՅՍ բարբարոսութեան առաջն առնելն անհնար էր մարդկան . մեծութիւնը բռնութեան պատճառ կ'ըլլար , շատ հեղ կարծեցեալ իմաստութիւնն ալ ուժ կու տար անոր . անոր համար Իստուած այսպիսի բռնութեան դէմինչ պէս վերոյիշեալ տեսլեան հսկայաձեւ արձանին դէմ՝ պղտի քար մը հանեց , որ զարնելով կործանեց , մանրեց , ցըրուեց այն տիեզերակալ արձանն և ինքը բոլոր աշխարհ տարածուեցաւ . այս ինքն է քրիստոսաբեր միրոյն սուրբ կրօնքը : Ի՞ւանց քրիստոնէութեան անհնար է մարդու կատարեալ բարեբաթուածը տես Օրագրիս նախընթաց թուոյն մէջ :

ըոյ , կատարեալ քաղաքավալար ըլլալ : Ծիէ որ Իսիոյ մեծ մասը բարբարոս է և Եւրոպա առաջ գնաց , ատոր համար է որ զեռ Իսիա այս լուսաբեր կրօնէն զուրկ է մնացեր . անոր համար այն սուկալի Իտալիաներն , ()մարներն , Ճին կիզներն , Ծվիմուրներն հանեց . Իսայց երբոր այս սուրբ կրօնքին սկզբունքը կը մոռցուի և կը թողուի՝ զարմանք չէ որ ամէն աշխարհի մէջ ալ մարդ նման կը քերով նման գործքեր ընէ . և Եւրոպայի մէջ ալ ամենէն ծաղկած աղջը ամենէն բարբարոս գործքեր ալ ընէ . և մէկ մ'ալ ելլէ որ իր փառասիրութեամբը 14 տարուան մէջ 5 կամ 6 միլիոն մարդ ջարդէ , և ամենող տերու-

թիւններ մէկ պղտի տան մը պէս կործանէ : Կափոլէնի զանազան կատարելութեանցը և մտքին ճարտարութեանը վրայ և զանազան բարեաց ալ պատճառ ըլլալուն վրայ՝ տարակոյս չկայ . բայց իրեն գլխաւոր գործքն՝ որուն հետեանքները գեռ այսօր ալ ոմանց արեան արցունքի պատճառ են , արդեօք արդար իմաստասիրութեան առջե կը ընան ազատել զինքն առաջին կամամենէն լուսաւորեալ բարբարոս ըստւելն , կը թողում որ տարակուսողը քննեն : Բայց մեզի անկարելի է այսպիսի աստուածաբեր կրօնքի լուսոյն մէջ ալ դեռ բարբարոսութիւններ տիրած տեսնալով՝ չկանչել աստուածախօս բերնին հետ , թէ լոյս եկն յաշխարհ , և սիրեցին մարդիկ առաւել զիսաւար . աշխարհս յիրաւի հիմա շատ լուսաւորեալ է , զի ջահեր շատ կան , լցար սփուած է ամէն կողմ , բայց երկնքին ամէն արեներն ալ գեռ քեզ են կուրի մը , աչքը գոցողի մը , չնայողի մը համար :

Բայց չի կարծուի թէ խօսքերնիս միայն տիրապետաց համար է զանոնք օրինակ բերենուս համար . այլ ինչպէս ազգի մը պատմութիւն պատմած ատեն սովորութիւնէ անոր իշխողներուն պատմութիւնը պատմել և անկէց զագգն ալ իմացընել , այսպէս իմանալու է բարբարոսութեան համար ալ . որ թէպէտ և մէկ կողմէն կը հալածուի քրիստոնէական կրօնքով , մէկալ դիէն գեռ պաշտպանութիւն կը գտնէ այն կրօնքին սկզբան դէմ զանազան պատճառներով : Այն ազգը որ 100 տարիի չափ իր մեծ լուգովիկոսին օրէն ՚ի վեր աշխարհիս ամենաքաղաքավար ազգը սեպուելու պատիւնաւերէր , ինչպէս երկու տարուան մէջ աշխարհիս ամենէն բարբարոս ազդաց ըրածներն ըրաւ , իրեն լը ըդովման ըստւած միջոցը . ով չգիտէր այն պատմութիւններն , ինչ զիսպուածներ կան չնն որ ատենօք հիմակուան բարբարոս ազգերուն կրթուած սրտերուն պատմելու ըլլանք՝ փշտիար պիտի ըլլան : — Ինգղիացոյ նրբութիւնը ամենուն յայտնի է . և սակայն դեռ ինչուան մօտ մեր

ատենաները իրենց լեզուակից , օրինակից և խնամի ազգին հետ ինչ աչքովնայել նին և վարուենին յիրաւի իրենց պատիւ պիտի չափեն ասկէ ետե : — Ապանիացիք Աւրոպական զարգացման սկզբ ընաւորութեան ատեն՝ կրնանք ըսել թէ առաջին ազգն էին զօրաւորութիւն և քաղաքավարութեամբ միատեղ . և սակայն նոր գտնուած Ամերիկոյ մէջ ինչ անգըթութիւններ ըըրին , որ այն բարբարոսներն ալ զարմացուցին : Ինչուան այս մեր դարս դեռ քաղաքավար և բարակ Աւրոպացիքն՝ ամօթ և անվայել չէր սեպեր իր եղբայրները երեսի սկզբանն համար՝ գերի բռնել և խոզերու կամ կովկերու պէս փարախներու մէջ փակել , վաճառքի հանել , խարազանով գաւազանով քշել , ճակատնին խարան զարնել , կուրծքերնին ծեծել շունչերնին փորձելու համար , մերկ հրապարակ հանել՝ առողջութիւններն ներու համար , բռուռ մը աղի գնով ծախել , պղտի անհոգութեան մը համար գաւազանի տակ կիսամեռ ընել , կամ սլաքով եզան պէս խթել . մէկ խօսքով իր ամէն անարդ գրաստէն ալ անարգագոյն սեպել զանիկայ՝ որ ոչ թէ միայն իրեն նման էր և իրեն քաղաքավարութեանց հասնելու բնութիւնը ունէր : Հապա հասարակաց ստեղծող Աստուծոյ մը պատկերն էր : Այսպէս ասկէ առջի դարուն մէջ չորս մեծ միլիոն գերի հանուած է Ամերիկէէն՝ մարդագին հարստութիւն վաստըկելու համար , և նոր երկիրները բանեցընելու պատճառաւ՝ զանոնք այն պանդիտաց ուկորներովն սերմաննելու : Այս այն ազգերն էին ընողները , որ կը դատապարտէին իրենց հայրերն՝ ծառաներնուն վրայ մահու իշխանութիւն ունենալուն համար : Այսօրուան օրս Աւրոպացիք մեզի կը սովորեցընեն թէ լիքրիկէ եռապատիկ կամ քառապատիկ մեծ է քան զլուրոպա . բայց բնակիչը քառապատիկքիչ են քան զլուրոպային ինչու չեն յիշեր հոն թէ այն բնագարձակ աշխարհին . սակաւամարդութեան մէկ պատճառն ալ իրենք են եղած , ինչպէս

նաև Ամերիկային, իրենց ամենէն բարեբարոյ կարծուած ատենախն։ Ի՞արեւազգաբար հիմա այս ամենամօթալի և ամենաբարբարս գործքը մեր քաղաքավար ժողովրդոց զգուելի եղաւ. սակայն բոլորովին անհետ ըլլալուն դեռ կը տարակուսիմք. իսկ թէ որ անսուամբ կամյայտնապէս գերեայ վաճառք ընկայ, սակայն ցաւած սրտիւ չեմք կրնար անոր նման ուրիշ բարբարոսութիւններ ալ չտեսնել. ինչպէս են նոր Ավկիական կղզեաց մէջ բարբարոսաց մենամարտութիւններ տեսարանի համար, որ անտարակոյս բարբարոսագոյն սրտի մը զբօսանք ըսելու է և քիչ տարբեր մարդակերաց գաղանութենէն, և սակայն աշխարհիս ամենէն բարակ ազգին աչքերուն հաճոյ է այս գժոխալի թատրոր։ Կայոր նրան, հինահարութիւններն ալ, մանաւանդ պատերազմի պատրուակաւ ծովու վրայ՝ բարբարոսութեան հաստ ձիւզերէն մէկն է. ինչպէս նոսեւ գաղանամար տութեան տեսարաններն որ տեղ տեղ կ'ըլլան. պժգալի մենամարտութիւնն՝ Խարոպային ամենէն յատուկ և խայտառակ ամօթը, և որչափ որ լուսաւորութեան յարմար սեպուած՝ այնչափ ալ խաւարագոյն բարբարոսութիւնը։ — Պատերազմը, որ յափառական բարբարոսութիւն մըն է և մարդկային բընութեան ամենէն մեծ նախատինքն, և թէ որ արդարութեան տեղ մ'ալ ունի, սակայն յայտնապէս անկէ ալ զուրկ են շատ պատերազմներ՝ որոնց պատճառը ամէնքը կ'իմանան թէ շահամիրութեան մը կամ նախանձու մը համար է. բարբարոս Ամիրիկոյ, Ամիսոյ, Ավկիանիոյ բարեւարոյ Խարոպացոց վրայ տեսած քաղաքականութեան առջի նշաններն՝ շատ հեղ պատերազմներն եղած են. Կայոնցմէ չեն զատուիր նոր նոր մահածու և մահացան գործիքներու զիւտերը և կատարելազործութիւններն, զոր լուսաւորեալ բարեբարոյութիւնը չամչնար անարուեստ աշխարհաց և բնակիրթ ժողովրդոց դէմ բանեցը նելու. Կայոնց հետ դնելու է կրօնքի պա-

տերազմները և կոփւները, տեսակ տեսակ բռնաւորական արգելմունքները, հաւատոյ և ծիսից անխոչեմհակառակութիւններն, անթիւ աւելորդապաշտութիւններն, աստղագիտութեան շոշարդներն, տանջանաւոր մահերն կամ պատիժներն, սպանման և ատելութեան գործիքներն իբրև պատուոյ նշան միշտ վրանին կրել նաև տաճարաց, եկեղեցեաց և ժողովրդոց մէջ. բաղդի խաղեր, ուղիղ բանին հակառակ գրոց ծաւալմունքն, և այն և այն։ Եւ ասոնց նման շատ բաներ, որոնցմէ ոմանք արժանի չէ յիշելն ալ. թէպէտ և յիշածնիս ալ կարեկցութեան համար յիշեցինք, և ոչ բամբասելու. ասոնք անսանկ յայտնի և իբր անյաղթ կարծուած բաներ են՝ որ ամենուն ալ թողուած է գիտնալ. Եւ ահա ասոնք են որ զերկիրս միգովլ կը պաշարեն. ուր է կարծեցեալ լուսոյն ծաւալմունքը, ուր է այն ծաղկած, բարակ, քաղաքալար Խարոպան. իտաւարը զինքը աշխարհիս մէկալ մասերաւն հետ կը հաւասարեցինէ. մանաւանդ, պէտք չէ ստենք, թէ որ զեռ շատ բանով քան զանոնք գերազանց է, շատ բանով ալ քան զանոնք մթազոյն բարբարոսագոյն ըրած է։

Կայոց թերեւս մէկն ըսէ. ուրեմն եւրոպական քաղաքավարութիւնն աւելի կամ նոր բարբարոսութեանց պատճառ կ'ըլլայ, որով և վնասակար։ Կս ալ ասոր հակառակ կը հարցընեմ. լոյսը աւելի վնասակար է թէ մութը։ — Կայոնէնք թէ մութ տեղ մը բնակած մարդիկ կային. տեղը իրենց գործել տալու շատ պատճառներ կրնար տալ, բայց մթին պատճառաւ անգործ կեցեր էին. երբեմն իրարու կը զարնուէին, երբեմն ալ անովլ կը կռուէին, երբեմն հանդարտ կը նստէին, մէկին ձեռքն որ բան մը ինկնար՝ երբեմն մէկալը կ'իմանար կը յափշտակէր, երբեմն իրարու կու տային կամ խարիսափելով չըրա դին կը գտնային ու խեղջ ապրուստ մը կը գրտնէին։ Հոն շատ գործիքներ ալ կային կենաց զիւրութիւն տալու, բայց մութէ, աւենել չէր ըլլար, պէտք էր որ այն-

Խեղճ վիճակին մէջ մնային ուզեն չուզեն : Այս մ'ալ յանկարծ շող մը կը ծաթէ , տեղը կը լուսաւորի , ամէն բան կը տեսնուի , չարն ու բարին , ու ամէն գործքի միջոց և յաջողութիւն կ'ըլլայ : Հիմա որն է ընտրելի , լցոն թէ մութն.... Ի՞այց կեցիր՝ նայինք ի՞նչ կ'ընեն այս լուսաւորեալ մարդիկն . ոմանք մէկէն իրենց խեղճութիւնը ճանչնալով դարման կ'ընեն , իրենց պիտոյքն ալ կը հոգան , ուրիշ ալ օգտակար կ'ըլլան . հարկաւորէն վեր ալ դիւրութիւններ և վայելութիւններ կը հնարեն , և երթալով կը բարձրանան անբանից մօտ վիճակէն : Ի՞այց ոմանք ալ լուսոյն պատճառաւ իրենց առջի չարասրտութիւնը աւելի կը բանեցնեն , ուրիշ վնասելու միջոցներ դիւրաւ կը գանեն . ոմանք զանազան գործիքներ կամ նիւթեր կ'առնուն չարեաց , ուրիներուն տկարութիւնը տեսնելով՝ հարատահարելը իրաւունք մը կը սեպեն , առաջ որ պարզ իրենց մոքին ուժովը կը գործէին զքարը , հիմա զրով ալ մոքերնին զինած՝ ալ աւելի սաստիկ կը գործեն , և իրենց նմաններն ալ դիւրաւ ճանչնալով դիւրաւ ալ կը միաբանին : — Հիմա ի՞նչ ըսէնք , լցոն աւելի վնասակար է , դառնանք առաջին մութին : — Քաև լիցի . վասն զի թէ ար նորէն մութը մանենք՝ հարկաւ ամէնքս ալ թշուառ և անբանից մօտ վիճակի մէջ պիտի մնանք . իսկ լուսոյն մէջ գոնէ ոմանք բարձրագոյն վիճակ մը կը վայլեն , և ուրիշ ալ կ'առաջնորդեն . մնայածներն ալ վայլելու կարողութիւն ունին թէ որ ուզեն : Ուրեմն մութը միշտ թշուառութեան կամ բարբարոսութեան սպատճառ է ըստ ինքեան ալ , իսկ լցոն երջանկութեան և քաղաքավարութեան : Իսկ թէ որ ամէնքը այս բարեացս չեն համնիր , նամանաւանդ զլոյմն ալ մեծագոյն չարեաց կամ բարբարոսութեան միջոց կ'ընեն , լցոն չէ անսնց պատճառ , հապա որն է :

Ի՞քջի ըսածէս յայտնի երեցաւ՝ թէ մութն այսինքն բարոյական մութն՝ որ է տգիտութիւն՝ պատճառ է եղեր բարբարոսութեան բարբարոս ըսուած ազ-

գաց , նոյնն ալ մէկ պատճառն եղեր է նաև բարեբարոյից բարբարոսութեցն ալ , որոնց մէջ թէպէտ և դիտութիւնք շատ ծաղկած են , բայց շատ ծաղկած ըսելը լաւ հասկրնալու է ի՞նչ ըսել է : Որ և է գիտութիւն մեծ չափով մը ճանցուած է և կարելի ըրած է ճանցուելու . բայց ոչ եթէ ամէնքն ալ այն պէս ճանցեր են . ինչպէս ըսեմ թէ , քաղաք մը ճրագ չվառեն գիշերը , հապա միայն խարուկի բոցով աղօտ լցու մը տեսնան . իսկ ուրիշ ծաղկած քաղաք մ'ալ պայծառ ջահեր վառած գիշերը ցորեկ կ'ընեն . բայց կան տուներ որ անձրագ անկանթեղ նստեր են . երկու տան բամբողը պատ մըն է , բայց ի՞նչ օգուտ որ իմ պայծառ ջահէս ամենեխն օգուտ մը չառնէր իմ դրացիս և մթան մէջ նստեր է : Ի՞այց սակայն ինքն այս առաւելութիւնն ունի մէկալ քաղաքին բնակիչներէն՝ որ երբ ուզէ կրնայ քանի մը քայլընելով գալ և գտնելիր չափաւոր ճրագն վառելու լցուր : Այսպէս իմանալու է եւրոպական լուսաւորութիւնը . ուր իմաստուն և քաջ քաղաքավար մարդիկ շատ կան , բայց տգէտներ ալ պակաս չեն . իսկ կէս իմաստուն և կէս տգէտ ըսուածներն եւելօք շատ են , և ասոնք կը նմանին այն նոր լցու տեսնող և չարաչար վարողներուն , որոնք շատ բարբարոսութեամց պատճառ են : Վցգ ազգի հետ բաղդատելով կ'ըսենք թէ աս անկէ իմաստուն կամ ծաղկած է , ըսել է որ մէկուն մէջ աւելի թուով կը գտնուին իմաստունք կամ իմաստութեմիջոյներ , մէկալին մէջ պակաս . տակայն ամենուն մէջն ալ իմաստուններն որ բուն քաղաքավարը են՝ առանձին առանձին մարդիկ են . դեռ մէկ աշխարհք մը , մէկ գաւառ մը , մէկ քաղաք մը , մէկ թաղ մը չէ եղած , որուն բնակիչը ընդհանուր իմաստուն ըսուին . ուրեմն մէկ տեղ մ'ալ չէ եղած որ ամէնքն ալ ընդհանրապէս քաղաքավար ըլլան : Ունէ որ սովորութեամբ Վթէնքի՝ քաղաք իմաստութեան կ'ըսենք , այն ալ մէջը անուանի դարոց մը ունենալուն և երելի գիտուններ հանելուն համար է ,

ոչ եթէ ժողովրդեան իմաստուն ըլլա-
լուն համար . ապա թէ ոչ Փարիզ՝ որ
նոր Աթէնք ըսուեցաւ՝ անկէ շատ վեր
է , բայց ընդհանուր ժողովուրդը իմաս-
տուն և բարեբարոյ ըսելը՝ կարծեմ շատ
ծիծաղելի կ'ըլլայ նաև բնիկ Կաղղիա-
ցոց ալ , թէ որ քաղաքավարութիւնը
շաղակրատութիւն ու ծեքծեքանք կամ
շարանիում ու սէրէնծնի չհասկընանք ,
հապա հակառակն բարբարոսութեան :

Ուրեմն իմացուեցաւ որ բարբարո-
սութեան մէկ պատճառն է Տգիտու-
թիւն , և անկէ է որ ամէն աշխարհք
և նաև Խւրոպիոյ լուսոյ մէջ ալ թանձր
թանձր նախապաշարմունքներ և աւե-
լորդապաշտութիւններ կան :

Տգիտութեան իննամին է Անակու-
թիւն ըսուածն ալ՝ որ է հին սովորու-
թիւն , որուն պաշտպանն է Անքնասի-
րութիւն կամ մոլար հայրենասիրու-
թիւն , որով շատ թանձր և բարբարո-
սական սովորութիւններ կրթուած ծաղ-
կած ազգաց մէջ ալ կան և կը մնան , և
արգելք կ'ընեն բարեբարոյութե մտնե-
լուն : Այս բանս զգալի օրինակով ցը-
ցոց Ապարտացւոց իրենց հին օրէնդի-
րը Լիկուրգոս , Երկու շուն մեծցընելով
մէկը վայրի տեղ մը , մէկալլ տան մէջ .
վերջը հետը բերաւ Ապարտացւոց ժո-
ղովին մէջ , ու թողուց ազատ . ընտա-
նին հոն գտած կերակուրներուն գնաց
ուտելու , իսկ վայրենին մէկէն նապաս-
տակի մը ետևէն ընկաւ : Այսպէս կը
գտնուին ժողովուրդք որ կրթութեան
ամէն միջոցներն ունին , բայց իրենց
հին վարժութեամբը նապաստակներու
որպէս կը վերապասեն :

Անակութեան պաշտպանն է ըսինք
Անքնասիրութիւնը կամ Անքնահաւա-
նութիւնը , որուն հետ մէկտեղ իմա-
սանք Լարծիքն ալ . ով որ այս կըքերուս
վրան ծանօթութիւն ունի , ամենեին
չի տարակուսիր որ ամենէն ծաղկեալ
և լուսալայծառ ազգաց մէջ ալ երբոր
այս կըքերս կան՝ շատ անապատային և
թանձրախաւար բարբարոսութիւններ
պիտի գտուին : — Տգիտութիւնը կու-
րութիւն է մտաւոր աչաց . ունակու-

թիւնը՝ բշակնութիւն է կամ վարա-
գուրեալ աչք , իսկ ինքնահաւանութիւնն
և կարծիքն՝ է շիլութիւն (շաշիութիւն) :
Բայց գիտութիւնք՝ քանի որ ուսմունք
կը հասկրցուի , թէ և ասկէ աւելի ալ
ծաղկին՝ ինչպէս որ յոյս կայ , և ոչ
միայն առանձնաւորաց մէջ այլ և ընդ-
հանուր , զի այս իսկ է ծաղկիլ ըսելիս ,
գեր բաւական չեն զմարդիկ բարեբա-
րոյ ընելու . ինչպէս շատ լաւ ըսաւ Ի՛
ռաքեալն , թէ „ Դիտութիւն հպար-
„ տացուցանէ , այլ սէր շինէ „ :

Ուրեմն ամենէն աւելի պակասութիւ-
ն և պատճառ բարբարոսութեան՝ է պա-
կասութիւն բուն բարոյական լուսոյն ,
այսինքն է քրիստոնէական սուրբ կրօ-
նից և վարուց . Քրիստոս Աստուած
նորոգող մարդկային բնութեան՝ մէկ
հատիկ Ճշմարիտ կապ Ճշմարիտ ընկե-
րութեան զրաւ զընկերսիրութիւնը .
“ Աիրեցէք զմիմեանս . Աիրեցէս զըն-
„ կեր քո իբրև զանձն քո „ : Անչուան
որ այս օրէնքս , ինչպէս որ Քրիստոս
կը սորվեցընէ և ոչ մարդասէր ըսուած
փիլատիայք , չհաստատուի , չծաւալի ,
չտիրէ մարդկութեան մէջ , բարբարո-
սութիւնը յաւիտեան չի վերնար աշ-
խարհէս , և ամենէն լուսաւոր և բա-
րակ ազգաց մէջ ալ պիտի մնայ և զօրա-
նայ չարաչար բարբարոսութիւնը : Ժաէ
որ Խւրոպա հիմակուան ուսումնական
վիճակին հետ՝ չունենար վարքի զեղծ-
մունքն , հաւատքի պաղութիւն և այ-
լանգակ վարդապետութիւններ անոր
վրայ , և քրիստոնէական սէրը Ճանճնար
մարդկութեան կնիք և նպատակ , մա-
նաւանդ թէ ըստ Ճանաչմանն անոր դի-
մէր , թէ ինքն հիմա շատ աւելի բա-
րեբարոյ կ'ըլլար , և թէ ուրիշ աշխար-
հաց ալ բարեբարոյութեան պատճառ :
Ուրեմն Ճշմարիտ կամ կատարելագոյն
քաղաքավարը՝ ոչ մասնաւորապէս տէ-
րութեանց մէջ , ոչ հարատութեան փայլ
մանց մէջ , ոչ գիտնոց ժողովարաններու
մէջ , ոչ Ճարտարապէտութեան հրաշ-
լեաց մէջ ինտուելու է , հապա այն ա-
մէն տեղ՝ ուր որ քրիստոսաշնորհ լոյսը
ազատ և սիրուն կը փայլի . մանաւանդ

թե ոչ տեղւոյ մէջ, հապա անձի վրայ փնտուելու է բարեբարոյն, և պէտք չէ տարակուսիլ որ շատ հեղ պղտի տնակը ներու մէջ, գեղերու, խղերու տակ ալ աւելի քաղաքավար մնադիկ կը գտուին. ինչպէս պալատներու, խորհրդանոցներու, ձեմարաններու մէջ աւելի գերազոյն բարբարոս է այն՝ որ իր ուղիղ բարոյականէն դուրս իր արուեստին վերաբերեալն և քանի մը զիտութիւն և օտար

բառ գիտէ, քան անիկա՝ որ վեցեակ մը լեզու զիտէ, 42 զիտութիւն, և ամէն աշխարհիս քաղաքավարութեան օրէնքները, և միայն իրեն կամ քանի մը անձին, ցեղի մը կամ մէկ ազգի մը, մէկ տէրութեան մը շահը փնտուելով՝ բիւրաւոր անձանց տէսակ տէսակ թշուառութեան, և բոլոր աշխարհիս քաղաքական բնակութիւնը շարժելու պատճառ կ'ըլլայ, կամ հասարակաց վարքը աւրելու, և միտքն մոլորցնելու :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵԴԱԿՈՒԹԻՒՆ

| ՀԻՆԳԻ | ԱՄՅՈՒՄ :

ԵՐԸՆԱՐ նըկուն զիւցափառի 'նընակալութեան
Տարեալ լայի զաղէտ վտանգիս 'ի Հնդկաստան .
Ի տիրածեմ հեռաստանեայն զիս 'ի յափանց
Ապանիացւոց առեալ բարձին 'ի նաւս իւրեանց .
Հետ հընդերեակ նժղեհս ամաց թողեալ ըզլլար .
Ինդ արեւուն գօտեաւ նաւեմ խընդամտաբար .
Տեսից դարձեալ ըզլիուանկաստան հէքս ես զինուոր
Զեռն որդեկիս կափուսցէ զաշս իմ 'ի յանդորր :

Շաարէ, զոյէ նաւուղիղն, “ Հա՛ Այուրբ Հեղինէ „ : —
Եւ ամստ ուրեմնն զիւցազն այն 'ի վիշտս երկնէ .
Ա ըիժուցդ՝ ազնիւ Ապանիացիք, շինցին աստ քէնք .
Եղովք 'ի ըզլթայս և 'ի դահիճն իւր շարանենդ .
Աչ, ոչ է զնա հնար ինձ փրկել այսուհետև ,
Օ ի ժամանակ փառօք մահուն՝ էանց զինե :
Տեսից դարձեալ ըզլիուանկաստան հէքս ես զինուոր
Զեռն որդեկիս կափուսցէ զաշս իմ 'ի յանդորր :

| ՔՈՒՆ Այժմիկ կացցէ արդեօք անյաղթն այն ռումբ
Որ ըզգահցս քսան կործանէրըն միախումբ :
Եցէ դարձեալ թէ յարուցեալ աշեղապէս
Շաղիսեալ Ճայթէր թագաւորացն 'ի դլուխըս վէս : —
Ա՛հ ոչ, պարեխս վիմիս զամէն հատանէ յոյս .
Աւ ես արծուին զիցըն դաղտնեաց կայ հետախոյզ :
Տեսից դարձեալ ըզլիուանկաստան հէքս ես զինուոր
Զեռն որդեկիս կափուսցէ զաշս իմ 'ի յանդորր :

1 Օր մահուն կափուլէռնի :

2 Գլուխն բարեյուսոյ :